Հայեր, միանանք մեր մօրն հետ օրհնենք
Զանոնք որ մեզի սուլին սուրբ օրէնք.
Սահմանադրութեան բարեաց փոխանակ,
Թառղ վարեն ուրախ կեանք մի փառունակ:
Թառղ և մեր որդիք հետ անոնց անուան,
Բիւրաւոր տարիք օրհնեն ու կարդան.
Կեցցէ և այն:

Յ. Գ. Ալլամշեան:

Երգ Վարդան այ

Արենք դուք Սասանեաց ի Ճամբար,
Մենք անցցուք զերկիւզալիցն ամեհարար
Ի նա անցցուք, արին զոշեր Վարդան յօժար,
Սպասմակ երիվարաց
Գոռ շեփորաց հրաւէր ի մարտ
Գոռէր ուժգին:
Գունստագունտ վառեալ ի զէն,
Սպասաղն Հայկեան զարմէն.

Զիարշաւ համին անդէն
Պատուրազմեալք խփախսեցան թշնամոյն դէմ:
Մըկունտ ասպար ի լոյս շղան սուր
Մըկունտ ասպար փայլատակի հուր,
Ի դրօշ ի դրօշ սպային կարգ աղեղն ի յուս
Տատանիլ սուսերաց փայլին փառք,
Ի շող փայլին ջնջ արեգին:
Անցյուք, դոչքը ձայն ահեղն, ոտն ի գայթ ի շքեղ.
Հնչեսցին անդէն պայթ և ձայթ,
Բոմբիւնք թմբկաց հայրենի շառաշիւն
Շեփորեաց պայթ և թնդմունք մեծ:

38

Ս ո ւ գ ջ ո ւ զ ա յ ե յ ո ւ ց :

Ավառ քեզ Հայոց խեղճիկ ժողովուրդ,
Ցիրուցան ելաք անմեղ անխորհուրդ,
Գերի գնաման աք դէպ ի Խորասան,
Փաղպած ու ծարաւ, արկլոր թշուառական:
Խարիւր ու խազար ցաւի դիմացաք,
Զեր քաղցրիկ երկրէն ոոք դուրս չդրաք,
Խիմի ձեր խօր մօր գերեզման թողաք,
Տներն ու ժամերն ուրիշն տուաք:
Էս սիրուն դաշտերն, մեծ մեծ քաղքըներն,
Փաղցրիկ ջրերն, ձեր շնն գեղերն,
Ումն աք թողման, որ գընաման աք,
Էսպէս կու լինի որ մուամում աք:
Վախում ամ էնպէս մնքերնուցդ ընկնի,
Ինչքան որ ողջ աք մնքերնուգ չընկնի,
Բարի ձեր որդուոյ, թուանց պատմեցէք,
Էսպէս խայրենիք քանդաց թողեցիք:

Մասիսի անունն, Նոյայ տապանի,
Արարատ գաշտին, սուրբ էջմիածին,
Մեր Խոր Վիրապի, սուրբ Գեղարդ, Մուղնի,
Չ'մոռանանք մինչ ՚ի օրն դատաստանի:
Աչքըս կուրանար, շլնքս կուրուէր,
Խեղայի Հայաստան, քեզ էսպէս չտեսնէր.
Թռէ մեռած էի, ինձ երանին էր,
Քան թէ կենդանի՝ աչքըս բաց տեսնէր:
 Ուստի վարդապետ:

39

Ի հանդէս առաջեն տարեգարձի հաստա-
 տութեան Ազգային Ամհմանագրութեան.

Արթնացիր ո՛ Հայ, նոր արշալուսով,
Տե՛ս ծագումն արիւոյն պայծառ երեսով.
Դարձած զարեւոր զուարթ շնջանէն,
Գայ պանծալ Հայոց վեհ բաղդին փան.
Պահնել զճակատ Սահմանադրութեան,
Ի փառս սիրատենջ Հայ ոգեցն վահմ.

Կեցցէ Միութեան Սիրոյ կենսասուն,
Կեցցէ Ազգային Սահմանադրութիւն:
Ե՛կ Արեւելեան խրամանաց քնար.
Բաղիսէ կնտնտոցդ ՚ի թել սիրահար.
Ճշմարիտ Հայուն շթմանց հետ երգել,
Օրս մեծ տարեգարձ օրէնսդրութեան:
Համնի արձագանքդ Հարցդ գերեզման,
Աղդային ազատ Սահմանադրութեան.

Կեցցէ Միութեան Սիրոյ կենսասուն,
Կեցցէ Ազգային Սահմանադրութիւն:

4

Ո՞ր Հայ մոռնալով յիշատակդ արդար,
 Կրնայ ուրանալ պարզեւներդ հազար.
 Դո՛ւ լոկ մխիթար Հայ սրախց տիտոր,
 Դո՛ւ Ազատութեան սիլիզն և պաշտպան.
 Իրաւանց ծորան, Սիրոյ կերպարան,
 Օրէնք Ազգութեան Սահման երկնաստուր.
 Կեցցէ Միութեան Սիրոյ կենսատուն,
 Կեցցէ Ազգային Սահմանադրութիւն:
 Բնութեան ամենէն գեղեցիկ ամիս,
 Ծնաւ քեզ անձկով ծաղկապասկ Մայիս.
 Օրօրոցի մէջ ամբողջ մէկ տարի,
 Լացի՛ր կղկղալով դառն հողմոց բերան.
 Բայց գգուելով ձեռք Ազգափրական,
 Հասուցին փառաց աւուրս տօնելի.
 Կեցցէ Միութեան Սիրոյ կենսատուն,
 Կեցցէ Ազգային Սահմանադրութիւն:
 Արդ ՚ի բաց մեզմէ սեւ թշնամութիւն,
 Մերձենամք ՚ի պերճ Սահմանադրութիւն,
 Տալ սիրոյ համրոյր ճակտին Հայկազնեան,
 Եւ ՚ի փառս Ազգիս, Հայրենեաց միակ.
 Ուխտել միշտ մնալ ազատ թեւին տակ,
 Մաղթել կալ հաստատ մինչ աւուրց վախճան.
 Կեցցէ Միութեան Սիրոյ կենսատուն,
 Կեցցէ Ազգային Սահմանադրութիւն:
 Օ՞ն հապա եղաքը Սահմանադրական,
 Պարենք թեւ ՚ի թեւ մէկ սիրոտ մէկ բերան.
 Եւ դու զարկ սիրոյ թելերդ ո՛քնար,
 Որ երեմն տիտոր հեծէիր ցաւօք.
 Օ՞ն ազատութիւն. յնծութեան փառօք.,
 Երդէ քաղցրանուագ մեղ հետ ծափահար.
 Կեցցէ Ազգային Սահմանադրութիւն,
 Ի շնորհս օՍՄԱՆԵԱՆ պետութեան արթուն:

40
 Դ ժ բ ա ղ դ օ ր ի ո ր դ .

Առաւոտը լուսանում է,
 Վեր եմ կենում անկողնից,
 Բոլորեցունց ուրախ օր է,
 Իսկ իմ համար տրտմալից:

Մօրից էլած շարշարվում եմ,
 Այս աշխարհի երեսին,
 Այս ինչ դառը վեճակ է, Տէ՛ր
 Որ ինձ տուիր այս կեանքում:
 Ինչո՞ւ այսպէս դժբաղդ եմ ես,

Մէջ օրիորդ ընկերաց,
 Միթէ այսպէս պետք է լինեմ,
 Գերեզմանում ևս պարկած:

Ո՛չ, ես այնտեղ, ո՛չ կլինիմ,
 Շատ երջանիկ ամենից,
 Ցուրտ գերեզմանը ինձ կազատէ,
 Բոլոր դառը վիշտերից:

Ես գնում եմ, հեռանում եմ,
 Այս վշտակ աշխարհից,
 Գերեզմանիս մօտենում եմ,
 Որ փորածէ սև հողից:

Տէ՛ին Կապարինէ Արդույանեանց: (*)

(*) Շատապումեմ մատուցանելու իմ խորին շնորհակալութիւնը
 Տիկին կ. Արզումանեանցին՝ իրա անխոնջ աշխատանաց մասին,
 մշակելով նայ գրականութիւնը:

Ա կ ա ր ի շ.

Ա հ ն ա պ ի շ, ա ն ձ ա յ ն, խ ո ր հ ո ւ ր դ ճ ա կ ա ս ի դ, Պ ա տ ա ն ի ո ւ ր ե ս մ ը ռ ք ո վ մ ե լ ը ր ա ծ.
 Ն ե ր ի ու վ լ ք ձ ի ն ն ե ր ց ի ր - ց ա ն ա ռ ա ջ ե լ, Վ լ ք ե ա յ կ ր տ ա ւ ը ք ու հ ա ն դ է պ ի լ ո ւ մ ձ:
 Շ ո ւ ո ւ ո ւ ր ա չ ե ր ը դ, ն ա յ է դ է ս ու դ է ն, Տ ե ս, ք ե զ ծ ա լ ը ր ու մ է ա ն մ ի տ ա մ բ ո ւ ի ր,
 Զ ա ր թ ի ր, ս ի ր ե լ ի, ա յ դ ա ն ու շ ք ը ն է ն, Գ ո ն է մ ի ա ն գ ա մ հ ա ն է ք ո ւ ո վ ր:
 Բ ա յ ց դ ո ւ ն ե ր ու մ ե ս ն ո ց ա վ ե հ հ ո գ ւ ո վ, Խ ո ւ լ ե ս ա շ խ ա ր հ ի ո ւ ն ա յ ն շ ը շ ո ւ կ ի ն . . .
 Յ ա ն կ ա ր ծ ա շ ե ր ը դ փ ա յ լ ե ց ս ո ւ ր ր շ ն ո ր հ ք ո վ, Հ ր ս կ ա յ ի ս ի ր ա ր դ թ ը ն դ ա ց ի ս ի ս տ ու ժ գ ի ն:
 Ա ս ի ր վ ր ձ ի ն ը, թ ա ց - ա ր ի ր ն ե ր կ ո վ, Ե ո ւ ն չ տ ո ւ ի ր ա ն շ ո ւ ն չ կ ո պ ի տ կ ր տ ա ւ ի ն:
 Ե ր կ ն ի ց խ ո ր հ ո ւ ր դ ը մ ե կ ն ե ց ա ւ ք ե զ մ ո վ, Ք ե զ ա ն կ ա ր ե լ ի ն ա ն յ ա յ տ է բ ն ա ւ ի ն:
 Ա յ ր, ա տ ե լ ո ւ թ ի ն, հ ա ն ձ ա ր, բ ա ր կ ո ւ թ ի ն, Տ ո ւ ի ր պ ա տ կ ե ր ի ն մ ա ս ի դ շ ա ր ժ ո ւ ա ծ ո վ,
 Ի ն չ ո ր չ յ ա յ ա ն ե ց ճ ա ր տ ա ր ի լ ե զ ո ւ ն, Գ ո ւ պ ա ր զ յ ա յ ա ն ե ց ի ր ա ն ձ ա յ ն խ ո ս ո ւ ա ծ ո վ.
 Ա պ շ ե ց ա մ բ ո ւ ի ր վ ա զ ե ց յ ա ս ո ւ ա ջ ե ց Ք ո ւ կ ի ր պ ա տ կ ե ր ի պ ի մ ա ց,
 Ծ ն կ ա չ ո ք վ ը մ ո ւ ո ս ու հ ա լ ո ւ է խ ը ն կ ե ց. Գ ո ւ շ ե ց մ ե ծ ա ն ա յ ն « Պ ա է ի մ Ա ս տ ո ւ ա ծ »:
 Բ ա յ ց, ա ի ս, ք ո ւ ա ն կ ո ւ ն ժ ա մ ե ր ո ւ ժ ի գ ը լ ը, Ք ա ն ի մ ի բ ա ր ձ ա ր է հ ա զ ի ւ, զ ի ն գ ր բ ի ն,
 Ս տ ե ղ օ ղ դ գ ա ր ձ ա ր ք ո ւ խ ե ղ ձ ի մ ի թ ը, Ա կ ե ր շ ա ր ե ց ի ն ։ Ո ւ ս Պ ա տ ի ս ա ն է ա ն կ ա յ ա յ ի ւ:

Ո ւ ս Պ ա տ ի ս ա ն է ա ն կ ա յ ա յ ի ւ

Ո ւ զ ե ր ձ. (1)

I

Ա մ ե ն ա ա ն ւ ր բ ե ր ր ո ր գ ո ւ թ ի ւ ն, Պ ա հ ե ա ն ա ս ա յ ց վ ե հ Տ է ր ո ւ թ ի ւ ն,
 Յ ա մ ե ն ա յ ն ի տ ո ւ ր յ ա լ յ ա մ ի թ ի ւ ն, Պ ա հ ե լ Հ ա յ կ ա յ Ս ե ր ո ւ ն դ ա ր ի ւ ն,
 Զ ա զ գ ի ս Հ ա յ ո ց գ լ ը ո ւ թ ի ւ ն:

Ե ր ե ք ա ն ձ ի ն ք մ ի բ ն ո ւ թ ի ւ ն, Տ ո ւ ր վ ե հ Կ ա յ ս ե ր կ ա ր ո ղ ո ւ թ ի ւ ն,
 Պ ա հ ե լ Հ ա յ կ ա յ Ս ե ր ո ւ ն դ ա ր ի ւ ն, Զ ա զ գ ի ս Հ ա յ ո ց գ լ ը ո ւ թ ի ւ ն:

Ա ն մ ա հ Ա ս տ ո ւ ա ծ, Ա մ ե ն ա պ օ ր, Պ ա հ ե ա ն ա ս ա յ ն վ ե հ մ ե ծ ա պ օ ր,
 Զ ա լ զ ե ք ս ա ն լ լ ր զ լ զ ե ք ա յ ն հ զ օ ր, Զ ա մ ո ո ւ ն ո ր ի ն ա մ ե ն ա պ օ ր:

Հ ա յ լ բ ա ր ե գ ո ւ թ, Ա ս տ ո ւ ա ծ ա ն հ ո ւ ն, Պ ա հ ե ա ն զ լ ի ն հ օ ր ն հ ո մ ա ն ո ւ ն,
 Ժ ա ռ ա ն դ զ ա հ ի ն վ ե հ զ ե ր ա ն ո ւ ն, Զ գ ա հ Ն ո ր ի ն կ ա լ ա ն ս ա հ ո ւ ն: Ո ր դ ի դ Ա ս տ ո ւ ա ծ, Հ օ ր ծ ո յ ա ծ ի ն.

(1) Ա յ ս „ Ո ւ զ ե ր ձ ” վ ե ր ն ա գ ր ո վ բ ա ն ա ս տ ե լ ծ ո ւ թ ի ւ ն ը գ ր վ ա ծ է Բ ա գ ո ւ յ ա շ ա յ ո ց Մ ա ր դ ա ս ի ր ա կ ա ն Ը ն կ ե ր ո ւ թ ե ա ն ս ա ս ն ե ր ո ր դ ա մ ե ա յ տ ա ր ե գ ա ր ձ ի յ ո բ ե լ շ ա ն ի ա ռ թ ի ւ (*) Պ ա ն ձ ա կ ա յ վ ի ճ ա կ ի, Ո ւ մ ա ր գ մ ա ն չ ա ց վ ա ն ք ո ւ մ, ո ւ ր ա ր ժ է. Ծ ն է ո գ ո ր ո ս վ ա ր դ ա պ ե տ ի հ ր ա ւ ի ր մ ա մ բ հ ա ւ ա ք վ ե լ ո վ լ ի ս ա շ ա կ ա պ գ ի ւ զ ի գ ո ւ ր դ ք ի ր ա ն ց ք ա հ ա ն ա ն ե ր ո վ լ պ ա տ ա ր ա գ ի և գ ո հ ա ց ո ղ ա կ ա ն մ ա ղ թ ա ն ք ի մ ի ջ ո ց ա ւ կ ա տ ա ր ե լ ե ն ա յ ս տ օ ն ը մ ե ծ շ ե ր զ ո ւ թ ե ա մ բ, բ ա ր ե մ ա ղ թ ե լ ո վ Ո ւ ս ա ց կ ա յ ս ե ր, շ ա յ կ ա կ ա ն կ ա մ ո ւ ղ ի կ ո ս ի և Մ ա ր դ ա ս ի ր ա կ ա ն Ը ն կ

Պահեա խնդրեմք Հօր միածին,
Զժառանգն ծիրանածին,
Կայսերուհին՝ կայսերածին:
Կայսերազինք պահեա ազատ
Զհամօրէն նոցին պալատ,
Զջերութիւն պահեա հաստատ,
Յամայր ամս միշտ սմբառատ

II

Հոգի՛դ Աստուած, Տէր անսահման,
Բղխումն անձառ հրածորան,
Պահեա զԱզդ մեր միշտ անսասան
Գահս հոգեոր ՚ի Հայաստան:

Հոգի՛դ Աստուած, անմահ որ էն
Պահեա հաստատ խնդրեմք ի քէն,
Միածնաեծ կաթուղիկէն,
Զգահակալ զ Գէորգէն:

Հոգի՛դ Աստուած, Տէր Մարդասէր,
Զօրայց՛ Տէր ի քո ի սէր
Հայրապետս մեր Ազգասէր
Երկար կենօք խաղաղասէր:

Բնդիսումն հօր միշտ անսպատ,
Հոգիդ անմահ անեղ անձառ,
Պահեա զԱսպետն Վեհափառ
Աղքիս Հայոց Տէր գերափառ:

Կենաց և բարօրութեանց համար:

Օսմ. Ե. Գրիգորեանց:

(*) 1874 թ. 21 Ույիսի: Բնկերութիւնը հաստատվածէ
1864 թ. 21 Ույիսի: Օսմ. Ե. Գ.

Յառուր տօնի սուրբ գալստեան,
Տօնեմք այսօր տօն բերկրական.
Վեհապետիս լիեալ օծման,
Եօթն շըջան արդ բոլորման:

III

Տօնեմք նաև տօն պատուական,
Չտօն բագւոյ Ընկերութեան,
Այսօր լիեալ տասնեակ շըջան,
Մաղթեմք տեսել միշտ յաւիտեան:

Հոգիդ Աստուած, Տէր Մարդասէր,
Պահեա ի խնամ ի քո ի սէր,
Զընկերաց գասս Մարդասէր
Յարդի զանդամն ընկերասէր:
Որհինեայի վասն կինաց,
Կինաց բագւոյ վեհ ընկերաց
Յաւելանան կամաց կամաց,
Տարիք հազար ամ ըստ ամաց:

Առ այս մատչեմք յուղերձ ՚ի հայց,
Զեռս ամբարձեալ առ Տէր Աստուած,
Վասն անդամոց, պատուելի արց,
Յաղերս մատչեմք բագկատարած:
Շնորհօք Ոտւսաց մեծի կայսեր,
Սիրով կապեալ ընկեր յընկեր,
Բանալ զակոս արգասարեր,
Որպէս մշակ սիրտ անվեհեր:

Քաջ երկզմբեան Արծուոյն ներքոյ,
Ընկերութիւն այս գերարգոյ,
Տայ զպտուղ ամենագոյ,
Աճէ ՚ի սէր միշտ մշապոյ:
Քանի մնայ բարձր կովկաս
Կայցէ յաւերժ ընկերաց դառ

Քանի հոսէ Երասխ անկաս,
 Անդամք բագուց կան մեկնաս:
 Քանի ցօլայ ծովն Կասպից,
 Ընկերութեան սէր յաւերժից,
 Մնացէ միշտ՝ միշտ բերկրալից,
 Ի սէր Ազգիս ուրախալից:

 Քանի կանգուն կայ Արադած,
 Խեանս խնդրեմք բաղկատարած
 Վասն Անդամոց Ընկերացած,
 Յօղնել Ազգիս միշտ միացած:

 Քանի Արևին յերինից 'ի ծիր,
 Գնայ ճեմէ անդուն աննիրհ,
 Ընկերութեան Զեր անձանձիր,
 Ջան և քրտունք չանցեն նանիր:

 Քանի աստեղք յերինից կամար,
 Միշտ պապղան բոյլք անհամար,
 Ընկերութեան ձիր, աննիհար,
 Ծնդ մէջ ածեալ ուսման կամար:

 Ընկերութեան Զեր Մարդասէր
 Մեք ընկալաք սիրոյ նուէր,
 Յաղօթս ելաք աստէն առ Տէր,
 Վասն կենաց Զեր բարեկեր:

 Թոթովախօս մանկանց երամ,
 Մաղթեն առ Տէր բարեխնամ,
 Ընկերութեանդ միանգտամայն,
 Խնդրել կեանս միշտ յամայր ամ:

 Շիրակունին Ազգին յըսպաս,
 Տքնի, Ճնէ անդուլ, անկաս
 Յուսայ խնքեան գոլ մեկնաս,
 Զեր պատուելի ընկերաց դաս:
 Ա անահայ Ա. Ժամանակաց ըսնից
 (Ժամանակաց Համար Ըսնից)

43
 Մահ Զար մայրայ Նահապետի Հայոց.

 Ամպը եկաւ՝ ծածկեց սարերն՝ ու ձորեր,
 Զէր տեսնուիլ պատերազմի դաշտերը,
 Մէզ, մառախուղ կ'իջներ Խդայ լեռներէն,
 Գիշերային մութը պատեց զիերը:
 Հիւսիսային հողմը փշեց սաստկադին,
 Հաղարամեայ կաղնին շարժեց, դուլացուց,
 Ամպի միջն վայլատակեց վայլակը,
 Ակօսի պէս պատուեց խաւար երկինքը:

 Դիակներու հռնդիւնը չէր լսվիր,
 Քամին հեռու կ'տանէր սաստիկ փշեռով
 Ամպի գոռալն կ'դղզէր երկիրը,
 Մըրիկ, կայծակ խառնված էր օդումը:
 Հեռուանց կուգայր լաց ու սգոյ ձայները,
 Տրոյացւոց՝ և կամ Յունաց բանակին,
 Ամենեքնան իւրեանդ մեռելն կ'պոռեն
 Այն չար օրը շատ կոտորվածք էր եղել:
 Ճրադներով՝ լապտերներով կ'պոռեն,
 Մարդոց, որդւոց մարմինները՝ կանաքը,
 Ունք շալկած կ'տանէին մեռելը,
 Ուն որ առաջ կու գտնէին արեան մէջ:
 Ով ունէր տէր՝ կու գտնվէր դիակը
 Դագաղներով կ'տանէին սյրելու,
 Մայրը քոյրը՝ կինը դուսորը միասին,
 Իւր մեռելին կ'տան վերջին պատիւը:

 Ամպերու մէջ չկան աստղեր, խաւար է,
 Աև քօլ պատեալ՝ սգաւոր է երկինքը
 Քամին փշեց լապտերներուն՝ մթնացաւ,
 Պատերազմի տեղը բռնեց լութիւն

Բայց հեռուէն՝ այն ի՞նչ լոյս որ կ'երևի
իդայ սարի կողմէն մէկ լոյս կ'փայլէ,
Լոյն անդադար շարժման մէջ է քամիէն,
Այլ կ'վառվի և չորս կողմը լոյս կուտայ:

Սարի տակը կու երևի մէկ ձրագ,
Որ լապտերով կախված էր այն՝ կաղնիէն,
Արգեօք ո՞վ կայ այս մութ զիշեր այն տեղը
Երևի, որ պտոռղ չունի՝ անտէր է:

Կաղնւոյ տակը փուած էր մէկ լայն մորթի,
Կամ առիւծի էր այն, ընձու, կամ վագեր,
Վրէն պառկած էր կարեվէր՝ քաջ զինւոր,
Մահու քրամնկը տուել էր բոլոր մարմինը:

Երկու ձեռքով բռնել էր իւր մէկ կողքը,
Կամենում էր իւր արիւնը դադարացնել,
Միտքը բերեց իւր սիրելի Հայաստան,
Յոդւոց հանեց՝ ցաւած սրտի խոր տեղէն:

Միտքը բերեց իւր կարօտեալ Հայրենին,
Նորոգեցան իւր խոցերու ցաւերը,
Արիւնը յորդ բղիւեց խոր խոր խոցերէն,
Այլ չ'մաց այնուհետեւ կենաց յոյս:

Վեր նայեցաւ՝ տեսաւ լուսով լապտերի,
Ծառի ճիւղքէն կախված էր իւր աղեղը,
Կապարձը լի՛ նեախւք ընկած գեախնը,
Սուրը մօան էր՝ բայց անպիտան իւր տիրոջ:

Մօտը կանգնած՝ էր միայն իւր երիվար,
Շուտ շուտ շնչով՝ խրինջալով՝ կը փէր,
Ուքով հողը՝ փորփորելով՝ վեր ու վայր,
Իւր տիրոջը՝ ցաւոց կ'լինէր՝ ցաւակից:

Առանց ձայնի՝ առանց լեզուի՝ որպէս թէ,
Կասէր տիրոջ՝ հաւատարիմ կենդանին,
Մի՛ պառկիր դու՝ այս մութ խաւար՝ զաշտումը
Մի՛ մնար դու՝ այս կաղնւոյ տակ՝ այս զիշեր:

Վեր կաց հեծիր՝ շուտ իմ վրէն իմ իշխան
Ես կը տանեմ՝ քեզ քո երկիր՝ Հայրենի,
Ես չորս ոտքս կը տարածեմ՝ զետինը,
Կը ցածայնեմ մէջքս՝ որ դու հեշտ նստես:

Բերանովս՝ կը բռնեմ քո թեկիցը,
Կը բարձրացնեմ կը լինիմ քեզ օդնական,
Մի՛ մնար այս օտար հեռի երկրումը,
Երթանք հասնինք՝ քո Հայրենի Հայաստան:

Անքաշեցայն՝ սաստիկ խոցուած Զարմայրը,
Հուր, բոց բղիւեց՝ խորոց հոգւոյն և սրտին,
Վազեց արիւն՝ լայնարերան՝ խոր խոցէն,
Խաւար մահու՝ պատեց աչքին և սրտին:

Ասաց՝ արի՝ իմ քաջ ընկեր՝ մըտերիմ,
Արի՛ ազնիւ՝ իմ երիվար՝ իմ նըժոյդ,
Ես չեմ կարող՝ միւս անդամ քեզ հեծնել,
Թամբիու վըա առաջվան պէս՝ այլ նստել:

Ասպանդակիդ այլ չեմ կարող ոտ դնել,
Եւ ո՛չ ձեռքով՝ սանձդ բռնել՝ մըտաքսեայ,
Այլ չեմ կարող՝ քեզ հետ շրջել՝ սար ու ձոր
Պիտի մնամ՝ կարօտ կանանչ դաշտերուն:

Քանի՛ անդամ մենք պատերազմ ենք տեսած,
Քեզ հետ մոել՝ քեզ հետ ողջամբ՝ գուրս եկած,
Ինձ շատ անդամ՝ ծառայել ես՝ մոերիմ,
Մէկ անդամ ես՝ կատարեալ իմ՝ պաշտօնը:

Մէկ մօտ արի՛ առ իմ յետին՝ ողջոյնը,
Սանձդ առնում այդ աներկիւղ՝ քո զիլիէն,
Մէկ համբուրեմ արտասուալից աշքերուդ,
Իմ ողջոյնս տա՛ր հայրենի՝ մեր երկիր:

Գնա դարձիր շուտով հասի՛ր Հայաստան,
Որուն կարօտ պիտի մնամ այս՝ տեղը,
Գընա՛ մեր տուն՝ Արմաւիրին տար՝ համբաւ,
Որ չ'սպասէ իւր իշխանի դառնալոյն:

Արդւյս տեսնես՝ ասա՛ չունիս՝ այլ զու հայր,
 Հայաստանն է՝ այսու հետեւ քո ծնող,
 Ասա՛ Հայոց՝ Ձեր Նահապետը՝ Զամայր,
 Գետնին զրեց՝ իւր երկսայրի սուսերը:

 Ասա՛ Հայոց՝ ձեր Նահապետ Զարմայրը,
 Չեռին չո՛ւնի տհեղ գեղարդ և վահան,
 Ասա՛ Հայոց ձեր Նահապետ Զարմայրը,
 Այլ չէ՛ կարող հրաման տալ՝ իւր զօրաց:

 Ասա՛ Հայոց՝ ձեր Նահապետ Զարմայրը,
 Չէ՛ առաջնորդ քառասուն հազար բանակին
 Քաջ Հայերը՝ ցիր-ցան եղան դաշտի մէջ,
 Ոչ ոք տեսաւ՝ իւր իշխանի մեռնելը:

 Բայց երբ տեսնես՝ զու նորահարս՝ սերած,
 Որ զրկի մէջ՝ մէկ հատ տղայ՝ ունենայ,
 Որ աշքերէն թափում լինի արտասուք,
 Ու դաշտի մէջ՝ պտուում լինի գերեզման:

 Ու իմ անուն՝ յիշում լինի անդադար,
 Ու երեխին ասում լինի մշտապէս,
 Թու զու որբ ես՝ ու հայր չո՛ւնիս յաշխարհի
 Այսուհետեւ քեզ չի ճանշնար Հայաստան:

 Այսուհետեւ՝ զու մի՛ տեսնիր Արմաւիր,
 Այսուհետեւ՝ մի՛ յիշեր զու՝ այն օրը,
 Որ քեզ իշխան՝ ազգի կոչեց Հայաստան,
 Իմայիր որ՝ նա իմ կինն է խղճալի:

 Մէնակ նըրան՝ մի՛ պատմեր զու իմ մահը,
 Նա չէ՛ կարող՝ լսել այդ սև համբաւը,
 Թո՞ղ չկաթէ՛ նորա աչքէն՝ արտասուք,
 Թո՞ղ թաց չ'անէ՛ նա արտասուք սև հողը:

 Նըրան ասա՛ իմ սիրական՝ սիստակ ձի,
 Թու քո մարդը՝ օտար երկիր՝ հեռաւոր,
 Այլ գեղեցիկ՝ աղջրկան հետ՝ պսակվեց,
 Քեզ մնուացաւ՝ ոչ յիշեց քո՛ անունը:

Ասա նըրան՝ իմ սիրական՝ սիստակ ձի,
 Թու քո մարդը՝ իդայ սարի տակումը,
 Նշանուածին՝ առաւ գիրկը՝ պառկեցաւ,
 Աչքը խըմեց քաղցր քնով՝ քնեցաւ:

 Ասա նըրան՝ իմ սիրական սիստակ ձի,
 Թու քո մարդը՝ վիսայի պէս՝ պառկեցաւ,
 Հարսանիքն էր իդայ լերին՝ հովտաց մէջ,
 Հարսնարամը՝ ղիակներով զարդարած:

 Առագաստն էր՝ երկնից կապուտ կամարը
 Ճրակները՝ հրեղէն փայլակ՝ և կայծակ,
 Անկողինն էր՝ սառն ու խաւար գէճ հողը,
 Նուագարան՝ ամպոց ահեղ՝ գոռալը:

 Մատանին էր՝ լայնարերան գեղարդը,
 Հարսնացուն էր անյաղթելին Աքիլէս,
 Փեսաւէրն էր՝ հին բարեկամ Մեմոնը,
 Եւ հարսնաքոյր՝ Պանթաղեղի Ամազոն:

 Իմ զարդարանք՝ եղաւ կարմիր արիւնը
 Ողջագուրանք՝ զիոց մահու՝ հրունտիւն,
 Նշանվեցայ՝ սուր պաքօք նետերու,
 Պսակվեցայ՝ պողովատիկ սուսերով:

 Հեղինակ՝ „Պանդիպոնի ՚է Գերեզման Լեռնի ՚ի Փարեղ”

 44

Երգ մեռանող ընկերի.

ըստ Եղանակին

„Պանդիպոնի ՚է Գերեզման Լեռնի ՚ի Փարեղ”

Ազնիւ ընկեր ինչո՞ւ այդպէս
 Թողնում ես ինձ վառալի,
 Ու չես կամում զու քո սրտի

Գրալսնիք յայտնել մի առ մի:
 Ահա և քո միակ ընկեր
 Վերջին համբոյր քեզ տարով,
 Դարձնում եմ քեզ իմ այս խօսքեր,
 Արտասուալից աչերով:
 Իմ սրտակից աղմիւ հողի,
 Թըռի՛ր ահա դու շուտով,
 Դէպի Փրկիչ քո Յիսուսի,
 Նորա բարիք տեսնելով:
 Հանդի՛ր այնուեղ՝ այն սուրբ երկրում
 Դարէ ՚ի գար ցնծալով,
 Պատճառ, քո բաղդ այն աշխարհում,
 Պիտի ժպտայ խայտալով:
 Պիտի քո բաղդ սատոստելով,
 Ժապտայ այն տեղ, որտեղ որ
 Շատ սոխակներ բաղըրիկ ձայնով,
 Կ'երգեն և քեզ ամեն օր:
 Իսկ ես ուխտում ու պատրաստ եմ
 Զը մնուանալ քո գործեր,
 Եւ քո անուն պահելու եմ,
 Շատ շատ օրեր տարիներ:

Եւ Գրեթուեաց:

Երդ ու գնացք զօրացն Հայոց.

Բա՛մ վորոտան բարձուստ բոմբիւնիք յԱյրարատեան դաշննի վայր,
 Արի արանց արիւնիք յեռանդն առատանան ՚ի հրազայր.
 Հրաւեր հայրենեաց հըռչակինդ հանուր
 Հողիք Հաւկազանց բորբոքին ՚ի հուր.

Որք երկնաւորի պսակին էք կարօտ
 Ու որ երկրաւորիս փառաց երկնահօրդ,
 Հապ'օն, արի արանց մանկունք
 Հայրենավրէքըրդ Հայկազունք,
 Հապ'օն ՚ի զէն գունդագունդ,
 Յեռեալ ՚ի պար թունդ ՚ի թունդ՝
 ՚ի զէն ՚ի վրէժ, օն անդր յառաջ,
 ՚ի զէն ՚ի վրէժ, մի ձախ մի յաջ,
 Օ՞ն անդր յառաջ մի' ձախ մի յաջ
 Օ՞ն անդր յառաջ յառաջ յառաջ
 Հայկեան փանդուանց որոտնդոստ դուընչն բարբառ մարտագոռ,
 Դառնակոռոչ անդրաձայնէ Պարսիկ կերկեր ՚ի շեփոր.
 Շարժեն հրեշտակք թեւը լուսադողողս,
 Ճիւաղք ճուճաղաց կայտուեն ՚ի դըժոխա.
 Շոխնդըն շանթառաք վեթերօք փարի,
 Սարսափեն սանդարք ՚ի խօլ խաւարի
 Հապ'օն արի արանց մանկունք,
 Հայրենավրէքըրդ Հայկազունք,
 Հապ'օն ՚ի զէն գունդագունդ, և այլն:
 Հ. Պէտանդ և Շահանեան:

Հ այոց գինի.

Բաժակներ առնունք եղբարք,
 Լիք լիք բաժակներ զինով,
 Կարմիր ու Ճերմակ զինին
 Մեզ լինի անոյշ համով:

Բերներիս տանենք անվախ
 Զէ դա խառնած կամ խարդախ

Նեկուար է և ո՛չ գինի,
Խմենք մեզ անոյշ լինի:

Արաքսայ ջըռվ ցողած
Հայոց արեւով հասած
Հայոց աղջիկ է քաղել
Քընքոյշ ձեռներով քամել:

Այս բերքն է Հայոց երկրէն
Հայաստան տընկած նոյէն,
Անմահ երկնային գինին
Նա խմեց երբ իջաւ սարէն.

Այս անոյշ գինին խմողը
Արտէն թո՛ղ հանէ ոխը՝
Ամենքս-էլ ասենք „ամէն”
Որ շատ տայ մեղի ամ էն:

Ո. Տ. Պատիւանեա:

Բաց քէն Հայրենիք.
Մայր անշափ քաղցրիկ.
Մէք 'ի դառն յաքսոր.
Տանջեցաք ցայսօր.
'ի ժամուն յետին,
Տիրուր արտասոււազին,
Ետու զիմ ողջոյն,

Երկնի քցոր սիրուն,
Մէք դէպ յեգերս Գաղղիոյ,
Հապա նաւեսցուք,
Հա նաւեսցուք անդուլ,
Ահ զե քաղցր են մեզ այս սիւք
Հայրենիք սուրբ սիրտ մեր,
Երկիր սուրբ օրհնեալ:

Զ հ ու դ ի տ ա ղ .

Բարե քել բատեփան,
Ե՞ն ի՞նյ հրաւալի բան,
Ե՛ ե՛կայ քել պատմեմ,
Գեղից վասխերըս առնեմ:
Ե՞ս սատ խոնարհ մարդ եմ,
Ոյ զէր, այլ լլոր եմ,
Բայց իմ սատ անցոյս հողին,
Ոսկի պէս ունի զին:
Թու ուզում էս՝ մորթէ՛
Թու ուզում էս՝ ձարթէ՛
Թու ուզում էս՝ ես թաղվեմ,
Տուր նախ վասխերըս առնեմ:

Ի հ ա ն դ ի ս ի ե ր բ ո ր դ տ ա ր ե դ ա ր ձ ի
Ա զ դ ա յ ի ն Ս ա հ մ ա ն ա դ ր ու թ ե ա ն .

Գարուն Հայաստան գայ ծաղկապսակ.
Զայն ողջունելու ելէք Հայ զաւակք.
Անցան սեւ օրեր, օրեր մահահոտ.
Հայոց նոր բաղդի ծաղի առաւօտ.
Ահմանադրութիւնն ուղեցոյց կենաց,
Արոյ զրօշակուլ երաւ զարդարուած:
Որ փայլ Յրմւ սուրբ Հայաստանի,
Որ Հայ Աղջութիւնն փառօք վերածնի'.
Կեցցեն անձնուէր որդիք Հայկաղունք,
Կեցցէ Աղպային Սահմանադրութիւն:
Կոմիլ մարտասուք հեղունք աննախանձ,
Ի սուրբ յիշասակ մեր քաջ նախահարց.
Կաթիլ մի քրտինք հեղունք անխնայ,
Ի նպաստ Աղպայ յուսոյն ապագայ.
Եւ ոչ իսկ խնայենք բոլոր մեր ճգունք,

Կրօնի, Հայրենեաց և Ազգի սիրոյն:
Որ փայլի Արեւ . . . և այլն:
Հայեր, միանանք, կ'ընենք առաթուր.
Ամեն ուժ և նենդ, պարիսպներ ամուր.
Երինք զայս մեր սուրբ կ'օրհնէ Միտւթիւն,
Ի Աստուած Գրիգորի զօրավելու արթուն.
Հաղա խրախուսներ, կուրծք տանք անվեհեր,
Ընկճենք կործանենք, ամեն արգելքներ։
Որ փայլի Արեւ . . . և այլն:
Ունինք սիրա արի ողի եռանդուն,
Ժաւանեց մնայած բազուկ աննըկուն.
Դարերու յաղթող Աղջի զաւակ ենք.
Ամեն նախատինք օն փութով Ծննդենք.
Անմա՞հ Հայութեան կանոնենք յաղթամասկ,
Հայոց Մօր ճակտին հիւսենք սկերճ պսակ։
Որ փայլի Արեւ . . . և այլն:

Ո. Պ. Պ. Փակառչան։

50

Վերջեն դարսւն.

(Երդ օրհասականի)

Գարունն է եկել նախշուն թեւերով,
Նախշուն թեւերը պէս պէս ձեւերով,
Գոյն գոյն ծաղեկներ՝ կարմիր ու սպիտակ,
Վարդ, մեխակ, շուշան անուշ հոտերով։
Երկինք ու երկիր քեզ տօնեն գարուն,
Զի ես քան զամեն եղանակ սիրուն,
Նա անձրեւ ցողէ առատ 'ի վերէն,
Դա օրհնել տայ քեզ եկոր հաւերուն։

Ոսկի արեւը փայլէ քեզ վերէն.
Կենսարեր հովը փըչէ 'ի լերէն,
Ախ, աղնիւ գարուն, եղանակ սիրուն,
Արդեօք դու ի՞նչ բաղդ բերիր ինձ Տէրէն։
Գվիաքարը երթամ 'ի պարտէզ այզուն,
Ախ ու վախ քաշեմ ես անդ օրն 'ի բուն.
Զի կայ ինձ հանդիստ, ցնծութիւն սրտիս,
Ես վաղ եմ մոռցել՝ զի՞նչ անդորր է քուն։
Մեռած, պատանքած գետնին կեանք տուար
Տերեւթափ ծառին ստուերախիտ արար.
Քեզ թռչնոց երամ հանդէս կանչեցիր,
Ինձ մենակ խղճիս էսպէս մոռացար։
Առաջ գնա՛, գարուն, դէպ հիւսիսն 'ի խոր,
Գնա՛, կանանցո՛ւր դու անդ սար ու ձոր,
Որոց անհամբեր քեզ կան՝ տո՛ւր բարեւ,
Քուրախ գալըստեամբ նոցա զուարձացուր։
Կու գաս զալ տարի՝ դու ինձ կու գտնես
Ո՛չ 'ի մեր այգին եւ ո՛չ 'ի պարտէզ,
Այլ անզարթ քընով հողի տակ պառկած,
Գերեզմանաքար մի վոսս կու տեսնես։

Ո. Պատկանեան։

51

Գիւղական աղջիկ եմ ես զամբիւղաշէն
Եկեալ աստ զամբիւղօք 'ի Հայոց երկրէն,
Յուսամ, զի Հայ տիկնոսյք եւ պարնայք Հընդկաց
Բարձր զին տայցեն իմ սիրուն զամբղաց.
Առ զամբիւղ (3) յօտար աղջկանէս,
ԶԱրարատ, զՆիգրատ և զՏիգրիս թողի,
Միայնակ շրջեմ աստ յեզերս գանգէսի,

Պանդուխտ եմ, օգնեցէք անսերունչ անձինս,
Զի ծնողք ձեր յառաջ աստ պանդուխտ էին:

ԱՌ զամբիւղ, և այլն:
Զամբիւղք իմ են յարմար ասինեզործութեան:

Պահել անդ զմատնոյ, գթել, զասզաման:

Իմ ձեռօք եմ բործեալ ես զամենեական,

Երբ խաշնիք եւ գառինք իմ զնեւ խայտան:

ԱՌ զամբիւղ, և այլն:
Գանձք բաղումք, ցաւք բազումք կան յայսմ աշխարհի.

Պէտք սակաւք, ցաւք սակաւք կան յիմում երլիի,

Զայդի մի ունեի զամբիւղ դործէի

Լոկ կաթամի եւ պանրով երջանիկ էի:

ԱՌ զամբիւղ, և այլն:

Աստ սերկեւիլ, ծիրան եւ խաղոլ չի կայ,

Բայց միայն, ալիսա քիլա եւ ատա.

ԱՌ, երբ իցէ, զի արժանի եղեց վերըստին

Ճաշակել զպառւզս խմոյ պարտիզն:

ԱՌ զամբիւղ, և այլն:

Ապա դուք լաւ տիկնայք՝ զամբիւզս իմ առեք,

Գիւղական աղջկանս սիրով օգնեցէք

Զի դարձեալ յերկիր իմ հանդերձ ձեր շնորհօք՝

Զերախտիս ձեր առեալ՝ գովեցից բաղմօք:

ԱՌ զամբիւղ (3) յօտար աղջկանէս:

Մ. Օմաղյանի տան:

Գիշեր ցորեկ կը հառաջեմ ա'խ օրիորդ քո սիրուդ,
Ակ աչքերուդ վարդ այտերուդ զարնուեցայ ինչ օդութ,
Աչքերուդ, այտերուդ և ոսկեթել մաղերուդ,
Միայն քեզ սա կաղաչեմ, որ ունենաս քիչ մը զութ:

Գիտես անգութ որ պատանին չի գիմանար այս ցաւուն,
Քեղի համար ալ չի դաշրիր աչքիս արցունքն օրն ՚ի բուն,
Քեզի միայն կ'յիշեմ թէ քուն ըլլամ թէ արթուն,
Թէ մութ ըլլայ միաքս կու զաս նոյնակս և առաւօտուն:

Շատ աղուորներ թէպէտ տեսայ, սիրոս միայն քեզ սիրեց,
Ո՞չ չիմ դիմեր, թէ քու սիրդ սրտիս մէջ ո՞վ արծարծեց,
Ալս քու խոշուն մարդկի իրէն վեսայ ո՞վ ընարեց,
Գերի կըլլամ քու մօրկանդ եթէ զիս զուրս չ'ձզեց:

Ո՞ւր էր որ սա աղջիկը ինձի ըլլար աճուսին,
Խիստ երջանիկ Ույերու պէս ապրէնաք ՚ի միա փն,
Թոմկուլիկ կորիկ զաւկըներիս մեր չորս զին,
Եւ ծխէի իմ սիկաւս, աշխագործեր իմ ոչիին:

Քեղի համար թափառական ես սար ու ձոր ընկեր եմ.
Քեղի համար ճըզիկ ճըզիկ ոսկոռ ու մորթ եղեր եմ,
Ալ բաւական իս խոցես, ահա ոտքդ ընկեր եմ,
Ըսէ ինձի բառ մերջանիկ, թէ ես ալ քեզ կըսիրեմ:

ԱՌ մանկունս գողթան:

Գողթան մանկոի ահա ձեղ,

Եքեղ փառաց ասպարէղ,

Օ՞ն փութայէք, խումը կաղմեցէք. } 2.
Պսակ անթառամ մնան ձեղ: } 2.

Գիտէք ոյք են ձեր Նախնիք,

Բանաստեղծից էք որդիք.

Որ քնարով ոսկի լարով } 2.
Հայրենիքն փառք բերին: } 2.

Գուք ամենից էք գրկուած,

Փառքեր ունիք, բայց կորած

Հայ եղայրներ են մերկ քաղցած,
Եւ Հայրենիք մ'աւերած։ } 2.

Գիտէք զ փառս զեր նախնեաց
Թագաւորաց իշխանաց.

Որք նիզակօք սուր սուսերօք } 2.
Հայաստանին փառք բերին։ } 2.

54

Գոռող թշնամւոյն երթանք կործանենք,
Չքնալ յաղթութեան մրցանակ առնենք։
Հայրենեաց փառքն յաւէտ շողշողաց,
Եւ ամենեւին չը նսեմանայ։
Հայրենեաց սիրուն ջահը թող վառի,
Մեր սրտերու մէջ երբէք չը մարի։

55

Անձուկ Հայ մանկանց Կ. Պոլսեցւոց։

Գիշեր ցերեկ կ'հառաշեմ
Ա'խ Հայաստան քո սիրոց,
Նախնի փառաց վեհ քաջերուդ
Լոյն է մարէ ի՞նչ օգուտ։
Կարօտ մնանք սարիդ. դաշտիդ
Եւ ոսկեգոյն արևուդ
Միայն առ Տէր այս պաղատիմք
Որ ունենայ առ մեզ գութ։
Գիշանայ և բաղդն, զի Հայ մանկունք,
Չեն զիմանար այս ցաւուն,
Քեզի համար մեր աչքերից

Հոսէ արցունք զօրն ՚ի բուն։

Քեզի միայն մենք կ'յիշեմք.
Թէ քուն ըլլամք, թէ արթուն,
Տրտում, ախուր միշտ քեզ երգենք
Այրած հոգով մեր կեանքում։

Շատ ուհիներ թէպէտ տեսանք,
Բայց մեր սրտեր քեզ սիրեց,
Ո՛հ, չեմք զիտեր առաւօտուն
Մեր ցաւն ինչպէս քեզ սիրեց։

Քո բերդերուդ արդեօք սև քօղ
Անգթարար ո՞վ ծածկեց,
Ա'խ ո՞վ էր նա որ մեզ քեզնից
Գերւոյ նման իսկ զրկեց։

56

Գիմեսունքըն քիչ պիտին՝ որ զինին մէղար ունենար.

Խմողն փառք ու պատիւ՝ ծախօղն հազար ունենար։

Կալալէ խելօքներին՝ ոչ թէ յիմար հարբեցողին
Եարաբ էն հարբեցողն՝ չի ախսոսում տուած փողին,
Համարձակ քուժը է տալիս՝ իրան բարի կամեցողին,
Կարծելով մեծ բանի է, թասն է խփում փարչի կողին
Ո՛վ կասի ունկ է խուլին, աչք է կուրին, ոսք է կաղին.
Ես կասեմ խլացնում է, կուրացնում է աչքը սաղին
Շատ խմաւ կու կորցնի, ում որ ինչ հնար ունենայ։

Հարբածի պատուած շորն, իրան աշքին լաւ կերևի,
Խաշելին հալուայ կասի, հատիկն վըլաւ կերևի,
Եթէ ասես ողորմի հօրդ, նորան կուիւ, դաւ կերևի,
Տուն կու գայ ջահիլ կինն՝ շատ ամենապառաւ կերևի,
Արևելքն՝ Արևմուտ, Հիւսիսն՝ Հարաւ կերևի,

Թէ ասեն փոքր քնիր, մըռավելն ցաւ կերևի,
Կու վաղի եւ զինետուն, թէ գնալոյ ձար ունենայ:

Հարդողքն անհնար է՝ որ տանը մէկին չլ ծեծի,
. . . կատղած շան նման անտեսի ձեւն կու կրծի,
Եր թէ բարկացլ է, հա՛ կը կոնծի ու հա կածի,
Մահնա կենաց խմելն՝ առաջի բանն է հարբածի,
Կարծերվ հաղ է ասում, կու տանի զահլէն քրնածի
Ու էշն խոտ կու ձզի, ո՞ւ կարծակի որ արածի,
Զի ուղել որ աշխարհի մէկ բանից խաբար ունենայ:

Երանի էն խնդին, որ իրան խելքն չափում է,
Հարբելն միտ բերելուս ահ ու դողլվ սարսափում է,
Երբեմն խր թամահին՝ զինեխառ ջուր նա խմում է,
Ու որ ագահ լիում է, այնպէս էլ ագահ լսփում է,
Անքնար պար է գալխ, սատանէն մօտից ծափում է,
Ում դռնից որ ներս մոտ, տան տիրոջ միմն թափում է,
Յօժար է, որ դուրս քցի. հինգ թումնն զարար ունենայ:

Զարին'ար, այսոյ խրառար, բաս ինքդ էլ փոքր խմես,
Եթէ մին կուժ պատահի, չես դադարիլ որ չլ քամես,
Խունին նիսիա ես ծխում, բայց զինետան փողն տամես,
Եթէ իսպառ չի խմես, Մայիֆի հետ բարեկամես,
Խմելուս անկուշումես, չի խմելուս շատ անհամես
Լրմայ քառսուն տարիդ՝ աշխարհի զովերից խամես:
Փեղ նմանն փողի տեղ, բալքա զահրումար ունենայ:

Վերահամ Ստացան:

Դու տեսել ես Յունիս պամին՝ Երևանում դեղին վարդ,
Ծառը փշոտ, թուփը մշոտ՝ զոյնը դեղին քիչ զուարթ:

Ես տեսել իմ օգոստոսին՝ Նոր Բայազետ կարմիր վարդ,
Ծառը անփուշ ինքը քնիքուշ՝ հոտը տեղին խիստ զուարթ:

Վշտորութիւն Խոսկեւ:

Երդ Հայ պատան եկաց.

Թուրքաց „Զարքեալ բալա” երգի եղանակով.

Չո՛ւսար սիրուն Հայկաղեան, Լոյրդ կենաց մի դարման,
Գեղեցիկութեամբ Արայեան, Եու ընծայիր Հայ մարդկան,
Ուշը ես շընում անտերունչ, Անկեղծ ասեմ, չունիմք կար,
Պէս Շուշանիկ անմռունչ: Ինքրդ արա մեզ մի ձար:

Աէր իմ բա լս լս լս լս յ Սիրուն բա լս և այն.
Բա լս լս լս յ լս լս: Վառվառն բա լս և այն:
Աստուած սիրես Սրմենեան, Առորդ է քո սէր և արդար,
Զը մոռանաս Հայաստան. Վարդ, մանուշակ մեղ համար,
Յօտար ազգաց բայց կայիր, Մընաս բարեաւ յաւիտեսն,
Հայ պատանիս դու սիրիր: Անքրդ առարկայ Հայկաղեան:
Ջանիրմ բա լս և այն Անգին բա լս և այն.
Աէր իմ բա լս և այն: Աէր իմ բա լս և այն:

Դասինել Ոտրութանց:

Դու տեսել ես Երկնքումը, պայծառ լուսին ծագելիս
կամ թէ կանանչ տերեկի մէջ կարմիր ծիրան փայլելիս:
Դու տեսել ես ծաղկոցումը կարմիր վարդը վըթըլթած,
Շուշան, մեխակ ու նունուֆար չորս բոլոքը պար բռնած:
Բայց լուսինը խիստ խաւար է Հայ աղջկայ առաջին,

Եկան մեխակ ու նունուժար չ'արժեն նոր մէկ պաշնի:
Երկու թրշին վարդ են նատել, ձերմակ ճակաբն մի շուշն,

Ժայխար բերնից ցած չեղալիս, անմեղութեան է նշան:

Տե՛ս նա առաւ կարմիելով, իւր ընկերից գահիրան

Դրսկրպմեցոց փափուկ մասով, ու սկսեց լեզմինկան:

Նաղուք մէջքը ծառի նման տառանում է գեղեցիկ,

Մէկ թոշում է նա անգուման, մէկ զնում է խիստ հեղիկ:

Հալիում է խեղչ կորիճների սիրուր նորան տեսնելով,

Օքրը իրան անիծում է, որ ծերացաւ խիստ շուտով:

60.

Դուն աւեսնում իս, վոնդ փոխուիլ է
Բաղքի աղաթն ու վարքին,
Էն դու համար էլ բարկիլ է
Խաղիի մէջքըն ու խիլքըն:

Եակնչներու, քոշերու տիզ

Եկան սպալառն, չքմեքըն,

Եւրօնիքով, ֆայտններով,

Լըքուիլին քուչքը:

Միր բոզտշի, արտալի տիզ
Կատէտ, բուդինդ, սուփիր ին
Խնչերու տիզ՝ էրծաթ պոտոց
Քիզանի տիզ՝ ստաքնիր ին:

Մորթէ զրդակի մազիար

Ֆուրաշէք ու շլազնիր է,

Միտկիլի ու քաթանի տիզ

Պլատնո ու բատիստի է:

Մօդնի կնգայ պորտմանումը.
Լիքը էրծաթ օսկի է,
Միր տրշերանց խաղացածըն
Պլանչերանա ու վիստ է:

Մօդնի կնգայ բանն ու գուրծն է,

Սաղ օր դէս ու դէն ման զայ,

Փողոց, դէսօ, քարվանսարա,

Մաղաղիաներ գնալ:

Օքէքումը, լիւստրումը,

Ըստը նուր զուքսեր շանց ապլը,

Մէճնըքումը ճըկ ճըկալ

Փըստա, լեզվինկա խաղալ:

Թահար թահար գերիիքով

Ըշկապները լքցնում ին,

Գիշեր ցերեկ ման ին գայի

Լուս, նարգի ին խաղում:

Իմ կնիկը վրէս կատղիլ է,

Գրնայ. կաէ, բի՛ տեհնիմ,

Ինչ բերում իմ, նա չէ հաւնում,

Չիմ զիաի վուր ջուրն բնիմ:

Իմ քըքքըքուած կընիկը

Խսի տանը չէ մընում,

Երեխանցս չէ մաիկ անում

Դիմ դէս ու դէն է կրշում:

Վեհերումը, բալերումը,

Գարփա զարփա նատած ին,

Խեղճ մարթիքը տարեկուսած

Աչքը գոան մընում ին:

Էսէնց իմ մօդնի կընիկը,

Գլուխս ու զահլէս ատանում է,

Գիփ ասում է նա փուղ հա՛ փուղ,

Էսէնց հոքիս հանում է:

Չին կրաքրվում նրա բերնեմէն

Միրա պիտի պիտիքը,

Էս տա՛ր ու փոխէ՛, լսաք չէ,

Ըն բի՛, կորէ՛ մօդա է:

Եսուս համար միր աղջկիրքն էլ
Վունց կար, վունց ձեւ ին սորվում,
Սաղօր զոքած ման ին գալի
Տան բանիրը չեն շնում:

Իմոր կընիկ դառան, պրծան,
Էլ վունչնչ դարդ չունին,
Խեղձ մարթկանց ջանն ին հանում,
Դիմ վուղին ին զօռ անում:

Էս միր ուսեալ աղջրիրքը,
Ահաթի տասնին զարթում ին,
Զային հազեր խրմում ին
Կաթնով, բուլով, սուխարով:

Եսուս համար միր տըղերքն էլ
Հազար թումնիր ին ուզում,
Վուր կարենան կընիկ պահի
Միր հիմիկուայ քաղքումը:

61

Գոհունակութիւն նասիքից.

Դու տասն ու չորս տարեկան ես, ես քսանին հասամ հըրէս,
Դու աշխարհն նոր հասկացած, ես քո սիրոյ համն իմացած,
Քեզ ասում են աղջիկ պարոն, ինձի ասում են մեծատուն,
Յայտնի բան է ոչ թէ թագուն, Աստուած է մեզ միմեանց զուգել:
Դու խօսում ես հանդարտ համեղ, ես հասկանում եմ տեղբատեղ
Դու անուանի ՚ի մէջ կանանց, ես քաջ եմ ՚ի շարս արանց.
Դու ինձանով ես պարծանում, ես քեզանից եմ լիանում,
Էլ նասին չեմ հասկանում, Աստուած է մեզ միմեանց զուգել:
Քո մազերդ սարքին հիւսած, իմ բեղերս թանձր բուսած,
Քո երեսդ վարդ նորաբաց, ես համբուրում քո կամաց.

Դու Սառայ ես, ես Աբրահամ, Աս սռւած է մեզ և այն:
Դու մին մեծազին միւրվարի, ես քո մօտին նազդ մուշտարի,
Դու վայելութեան ցանկացող, ես մուրաբից չի կշացող,
Դու մահիճի վերէն փոքրաքուն, ես սիրահար եմ միշտ ջունուն.
Դու էլ հարուն, ես էլ հարուն, Աստուած է մեզ և այն:
Դու համարի՛ր Աննի տարին, ես Ճաքայնում Զարիեարին,
Դու սովորել ես իմ քէջին, ես մոռացել եմ Մայիջին,
Քեզ չի խրատել քո մէրն, ինձ չի քարողել տէրտէրն,
Աստուած է մեզ միմեանց զուգել:

Աբրահամ Ասրութունեան:

62

Զեփիւռ մանկանց.

Դու փափկաթե մանկիկ զեփիւռ,
Աղերց վրային լուսակարկաջ,
Անուշ հոտով ծաղկանց սիփւռ,
Ինչպէս թուշե ինձ ընդ առաջ,
Ու խունկ և զով ընծայելով,
Զիս ողջունես հեղեկ շընչով:

Ո՛չ կըսիրեմ զքեզ հողիկ,
Երբ կըփութաս ինձի զալու.
Ի պար ՚ի թուիչ ՚ի սոյլ մեղմիկ,
Այրած ճակտիս ինձ այցելու.
Ծաղիկ հոգւոյս քեւ զովացած,
Ծիլ ծիլ բացուի ՚ի լյո կենաց:

Ալացի՛ր փափկիկ դու սուրհանդակ,
Լուր տուր հովտին ու ծործորին.
Ու անտառաց բարձրագիտուկ,
Ուր երամով սոխակը թառուն.

Թաէ մտերիմն իւ բեանց եկաւ,
Բիւր զմնյըմնց յիշատակաւ:

Ո՛հ կորուսած իմ հաճոյքներ,
Հոս վերստին գտնեմ զմեզ.
Ծառոց շըքով էք ծածկուեր,
Ու փրփուրով առուակին հեզ.

Ահա' կայտուէք 'ի յայս ծըմակ.
'Ի յայս թմիուտ հովանոցակ:

Հոս դառն հոգեր մէկիկ մէկիկ,
Ճակտէս 'ի բաց հեռանային,
Եւ հոյլք ժամուց գեղապարիկ,
Սիրտս թեթև օրօրէին:

Եւ բնութիւն՝ մայր որդեսէր,
Քնքուշ զրկաց մէջ մեզ չես գգուէր:

Հոս ձեմէին երեկոյեան,
Ի զով ըստուեր պար մի կուսից,
Մաղերը հովան բազմաբուրեան,
Սիրտք ընծայուած հեշտ վայելց:

Եող լուսնակին կրյսն ու ծաղիկ,
Զիրար շցին սիրատարիֆիկ:

Մտերմութիւն, սէր կրակ ու բոց,
Ի՞նչ անուշ էք յայս տեսարան.
Ուր դալարիք ձեղ հանգստոց,
Ու անհուն դաշտեր վրօսարան.

Մտերմութիւն, ինձ երանի,
Թաէ հոս ծոցէդ հոգիս թռանի:

Դու փափկաթեւ մանկիկ զեփիւռ,
Աղբերց վրայէն քաղցրակարկաջ,
Անուշ հոսով ծաղկանց սփիւռ,
Թըռիր թըռիր ինձ ընդ առաջ.

Ու խունկ և զով ընծայելով,
Իմ շուրջ պատէ հեղիկ շընշով:

63

Ս գ ա լ ե մ ա հ ջ ե յ թ ո ւ ն ց ի պ ա տ ա ն ւ ո յ .

Երգ

Դու զով խնդրես մայր իմ անուշ,
Ե՛կ մի՛ դողար մօտեցի՛ր հոս.

Անլաց աչօք դիաէ զորդիդ,
Ու իւր վերքերն արիւնահոս

Թըռքաց մայրեր թո՛ղ լան ու դուն,
Ուրախ լուրեր տար 'ի Զէյթուն:

Ինչպէս երբեմն որրանիս մէջ,
Կակուղ ձեռամբ փայփայելով,

Մանկիկ մարմնոյս հանգիստ տայիր,
Իրբեւ հրեշտակ նուազելով:

Զիս հանգչեցուր 'ի հող ու դուն,
Ուրախ լուրեր տար 'ի Զէյթուն:

,,Սորեկ որդւոյս կենաց արեւ,
Զեղի համար փայլի չայեր"

Այսպէս յայնժամ դու երգէիր,
Օրօրոցիս նատեալ քովեր:

Անոնց համար շեջաւ և դուն,
Ուրախ լուրեր տար 'ի Զէյթուն:

Կարմիր կայլակք ցայտեն վերքէս,
Սակայն, մայր իմ, նայէ չորս դիս.

Զարիւնըռուշտ քիւրտերն տես
Հաղարներով փոռւած դետին:

Կերաւ զանոնք առւր մեր ու դուն,
Ուրախ լուրեր տար 'ի Զէյթուն:

Ինչպէս վեշտագ մրորնչելով,
Յանկարծ մեր վրայ յարձակեցան:

Յընցեց Զէյթուն զլուխն ժայռոտ,
իւր վեհեց մէջ թօթափեցան:
 Աքարմիր ներկաւ քորք մեր ու դուն,
 Ուրախ լուրեր տար ՚ի Զէյթուն.
 Ու Ծափ զարկին մեր հարց ըստուերք.
Զի չ մեռած Հայոց կրակ.
 Ու ցնծային այնչափ զրշեր.
Զի լուծաւ վրէժ յարեան վտակ:
 Խնդաց Մասիս, մայր իմ՝ և դուն,
 Ուրախ լուրեր տար ՚ի Զէյթուն:
Վերջին համբոյր տամ քեզ մայրիկ.
Հաստուցանես զայն սիրուհւոյս.
Վերջին անգամ զրկեմ մեր հող,
Ոյր արդ կիջնեմ ՚ի ծոցն անզյա:
 Խաչ մի տնկէ վըրաս՝ ու դուն,
 Ուրախ լուրեր տար ՚ի Զէյթուն:

64

Թաղումն Զէյթունցի պատանոյն.
Պար Զէյթունցւոյ.

Ու փող զարկինք ո՛չ արձականք լիսնասոյզ,
Սարէ ՚ի սար չարաշըշոկ տարին լուր.
Ու չերպեցինք ողբաց երգեր սրտայոց
Երբ պատանւոյն բացինք մըուայլ փոսին դուռ:
Գիշերական մունչ ըստուերներ շուրջ կային,
Երբ որ սըսով բըրով գնող փորեցինք.
Լուսին միայն դողդող շողար մեր պլիսին,
Ուգեր պատեր ըղդաշտ ըլլուր և երկինք:
Պէտք չիր դագաղ և ո՛չ ճերման պատանիներ,

Որով գոյուեր աղստորդի վէյթունցին.
Նա յետ մարտին կարծես հոգնած կու հանգէր,
Ու վերաբիուն կարմիր, բա՛ւ էր իւր անձնին:
Անձայն ու կարծ ննջեցելոց մի զըուցեց,
Մէր բաջ աէրսէրն, զինուոր Հայոց և Աստու ծոյ.
Գովեց զմօհն և զքաջութեան իւր օրհնեց,
Քոյլ չի տուաւ հաւաչ մ'ուձիկ հանելոյ:
Բայց երբ զլուխն ՚ի բարձ զրբինք հողաշէն,
Տեսանք զգեղ ճակտին ու վէրքըն պայծառ.
Ով պատանեակ, ըսինք ամենքս մէկ բերնէն,
Վասն հայրենեաց մեռար, դու շատ ապրեցար:
Գլուս' սըուցէ հայկազարմից մեծ ոգւոց,
Որ կան այս տեղ ազատ ու քաջ զեռ Հայեր.
Որոնք ՚ի բիւր պատերազմաց թէպէտ խոց,
Մէջ ամպրոպաց ՚ի ժայռ կանգուն են կեցեր:
Մէջ մ'ալ քամի յանկարծ փընց ցրաաշունչ,
Լուսին շողերն եկաւ գոյեց մըթին ամպ.
Ու մեր սարերն զերդ ուրուականք անմըռուունչ,
Սեւ զըլուխնին տնկած դիտեն ապշութեամբ:
Յայնժամ յուրա յուրա հող լեցուցինք իւր վըան,
Խաչ մի զըրինք, ինչպէս իւր մօր պատուէր ետ.
Ու այլ շըքեղ արձանագիր ո՛չ տապան,
Զէնքըն մինակ թողուղինք իւր փառքին հետ:

Մշտիւ Պէտէլլաւէտէան

65

Կանանց բաղրը.

Դուք տեսել էք վանդակում. Որ յուսահատ երգում է,
Խղձիկ թուշւն բանտարկած. Աղաս կեանքից նա զրկած:

Կամ լալիս է կամ լռում
 Կամ խշատին ձեղ նայում.
 Նա ձեզանից, Պարոննե՛ր,
 Աղասութիւն է խնդրում:

 Նորա տիսուր վիճակը
 Աւա՛ղ մի սիրու չէ շարժում,
 Աւ ամեն մարդ ուրա՛խ է,
 Եղբ նորա ձայնն է լսում:

 Այս խեղջ գերի էակը,
 Ե մխիթար հայ կանանց,
 Որ դարձդար խստաբար,
 Զորս պատի մէջ է փակուած:

 Նորանց տուած է լիզու,
 Նոքս ունին խելք, իմաստ.
 Բայց անողորմ մարդիկը
 Մոցա դարձրել են զրաստ:

 Այս ինչ այն ինչ զործերում
 Կինը խառնուել չէ կարող.
 Պատճառ մարդիկ միմիսյն,
 Պիտի լինին հշտակում:

 Եթէ ոչինչ բանի մէջ
 Կինը յանկարծ սխալուի,
 Ի՞նչ կայծակներ, Տէր Աստուած,
 Իսկոյն գլխին կ'թափուին:

 Իսկ թէ բողոք կամ մի ձայն,
 Հէնց ցանկանայ նա յայտնել,
 Ամեն կողմէց կ'ասեն թէ
 Ո՛չ մեծ յանցանք է զործել:

 Ինչի՞ կանանց ո՛հ Տէր իմ,
 Չես ստեղծել զու զօրեղ,
 Որ նոքա էլ երևան,
 Անմեղ արդար ամեն տեղ:

 Էնդուր գո՛հ եմ, երջանիկ,
 Ո՛վ յարդելի պարոններ,
 Որ տեսնում եմ ես ձեղ հետ
 Կին, օրիորդ լնկերներ 1):

 Տէ՛ն Կառերէնէ Արդյունականց:

1) Այս յօդուածը կարդացուած է գրականական երեկոյին 1872
 թ. Խագուայ Մարդ. Ընկերութեան դահլիճում:

Ծան. Ա. Կառերէնէ:

Կանայք չունին իրաւունք
 Աղատ կարծիք մի յայտնել
 Պատճառ մարդիկ ասումեն
 Կինը չգիտէ բնաւ դատել:

 Եթէ ոչինչ բանի մէջ
 Կինը յանկարծ սխալուի,
 Ի՞նչ կայծակներ, Տէր Աստուած,
 Իսկոյն գլխին կ'թափուին:

 Եկայք ընկերք սիրապէս } 2
 Կատարելու մի հանդէս } 2
 Ահա շքեղ տեսարան (2):
 Շնորհիւ Ռուսաց Արքային } 2
 Մենք աղատ ենք զրկառվին } 2
 Ակրել մեր Ազգ և Կրօն (2):
 Թո՛ղ ուրեմն իմ Հայե՛ր, } 2
 Արիանան ձեր սրաեր } 2
 Գովել մեր Հայկանիքին (2):
 Պատճառ նորա սուրբ Հողը, } 2
 Մերդ և պատղ և ջուրը } 2
 Օրհնեալ է մեր Արարէն (2):
 Եւ Կառերէնէ:

Կենաց բաժանակ.

 Եղարք՝ մի շուրջ ժողովեցէք,
 Քաջ Հայոց կերպի կոնծեցէք,
 Բաժակները դարդը կեցէք } 2
 Մեր Հայ աղքի կենացը:
 Հայոց երիտասարդներուն,

Հայրենիք պաշտպանողներուն,
Որոց անկումն-էլ սուրբ է մեղ—
Այս բաժակը նըւիրենք:
Հայ աղջիկներու կենացը,
Որք միայն Հայ մարդ կու սիրեն,
Միշտ իրանց մաքուր կու պահեն,—
Այս բաժակը դարդիկենք:
Արանց, որ մեր սիրտն զրաւում են,
Մեղ զգոն ձամբով վարում են.
Որոց կեանքը մեղ օրինակ,—
Մի երրեակ «կեցցէ» ասենք:
Եղարց, որք այժմ աւարտել են,
Մեր ուխտի անդամ եղել են,
Որոց ուխտը միշտ սիրում է,—
Այս բաժակը նըւիրենք:
Եղարց, որք դարդից ազատ են,
Մահուան հանգիստ վայելում են,
«Ողբսի հոգուն» ասելով՝
Այս բաժակը նըւիրենք:
Բայց որ գեռ դինին փայլում է,
Ու մեղ իրան մօտ կանչում է,
Բաժակներդ դարդիկեցէք
Բոլոր Հայի կենացը:

Ք. 8. Պատմութեան:

Երբ-որ հողեց մարդ դարձայ, Թօէ ի՞նչ վիճակ ես ուզում,
Երբ Աստուածանից հարցայ, Ասի ասանողութիւն

Աստուած ուզեց զարդարել
Ինձ, զիսպայ շրեր կարել.
Ասի էն դու կանանց տուր,
Ինձ մի նըշմազգեստ տուր:
Ով չել իլել ուսանող
Լաւ է, որ միշտ մընար հող,
Քանց Աստուածոյ լոյս արեւն
Անձ մի նըշմազգեստ տուր:
Ով չել կոնծել երգելով,
Ընկերաց հետ պաշտելով,
Մառանումբս լաւ զինի
Թուղ միշտ անպակաս լինի:
Ով չել երգուել ընկերաց
Մնայ ինձ միշտ հաւատարիմ. Պաշտպան լինել հայրենաց,
Փըղը շոտի ախոյեան՝
Տես մէջ նա թող չել մըտնի:
Մենից էնպէսն հեռանայ,
Լոյս աշխարհից վերանայ.
Թուղ ում ուզէ կարգն ընկնի,
Մեր մէջ նա թող չել մըտնի:
Ու Տ-Գ. Պատմութեան:

Ար և, ար և եկ, եկ կար միր ար և եկ, եկ.
(Հանդական երգ.)

Երբ կը պտտաս և մեր կողմնի,
Կ'արժանանանք տեսնել քո լոյս.
Երբ կ'տաքցնես և մեղ մեղմնի,
Մի թողիր մեղ կարօտ, մնցյա,
, Աիրուն արև, կամի՞ր արև,
Ե՞կ տանիք ուրախ մենք քեզ բարեւ.

Երկար ծածկուած ամպի տակում.
Թագ ես կացել. ասա՛ ո՞ւր ես.
Է՞ր մեզանից լոյսդ ես փակում,
Չես ցոյց տալիս մեզ քո երես.

Սիրուն արև և այլն:

Ո՞ւստի պիտի հնչէ և ե՞րբ
Կամ ո՞ր հողմն երկրի ծագած,
Ցրել մռաժ, որ այլոց կերպ,
Վայելնք ձիրք եղանակաց.

Սիրուն արև և այլն:

Ե՞կ, եկ կարմիր ա՛րև սիրուն
Մեշ մի՛ թողիր անլոյս այսպէս,
Եկ աղաջենք՝ բաց մեր գարուն,
Տեսնենք և մեք քո շնորհք պէսպէս
.. Սիրուն արև, կարմի՛ր արև,
Ե՞կ տանք ուրախ մեք քեզ բարեւ:
Ո՞վո՞ւն օհուապէտնաց,

70

Առ Կրասոն վսկին.

Երգեցէք, ազգ Հայոց. զգալուստ մերոյ հսկացի.
Ու երեմն պահպանէր, զպարխազ սուրբ Էջմիածնի:
Աթոռն աստուածիջեան ձեռամբ սորա վըրիեցաւ,
Անսերունչ Հայկազանց տէր և վըրկիչ յայտնեցաւ:
Եւրոպ և Ասիա զանուն սորին հըռչաեէր,
Յաղթական հիւս ծաղկանց ՚ի զլուխ սորին բոլորէր:
Անառիկն Երևան և Սիլիստրա գըլորի
Առաջի Երևաց սոյն խաչաղրօշ հըսկացի:
Ա՛զգ Հայոց՝ միաբան սմա Երգեցէք փառաւոր
Թռէ կրկին յաղթութիւն քո եղեցի շնորհաւոր:

71
Ի քաջութիւն Հայկայ.

Երկինք զուարթ ակնարկէր
Նահապետն ՚ի սիրա ցնծայ,
Զանձն Աստուծոյ ՚ի նուեր,
Յա՛ր և կենօք ճոխանայ,
Աստուածապաշտն ՚ի յասպարէզ Բոռնք երկրի խրախոյս բառնան
Գոռողն ինքնին կորանայ: Բոռն արկանեն զգինու:

Արուեստ մատանց մեր նախնացն Այլ պինդ ճայթմունք աղեղանց
Եհերձ ՚ի զբահ երկաթի, Քաջականգուր հսկային,
Որ կամեր առնուլ պաշտօն, Հանգոյն ահեղ որոտմանց
Կործան արկանել երկրի. Պակոյց զիրոտ ամբոխին.
Դիւցակրօնից սա պարագլուխ Ուր հզօրաց ձեռք թուլացեալ
Եառ զիւր վարձն արժանի: Փախչիլ, թաղչիլ դիմէին:

Եկայք սերունդք սոյն վիհիս
Զօնել նմա շուրջ պսակ,
Զմեր քաջութեան արգասիս
Յանմահ փառացն յիշատակ.
Զի ծանիցէ աշխարհ զմեզ
Թռէ եմք նորա իսկ զաւակ:

72

Առ Խամմազ.

Եարաբ Աստուած սա ո՞վ է, որ գալիս է նազ անելով,
Աշու ձախ մնիկ տալով, ինքն երանից հաղ անելով,
Ծամերն նախուն հիւսած, երեսին զօթազ անելով
ինքնահաւան թուլուղ է, ինդում է փարվազ անելով,

Կարաւ իմ՝ կեանքիս թեմն, սէրն սրտիս սուզ անելով։
 Ու այդպէս տեսնի քեզի, ցաւ կու հարի անտանելի,
 Զաղուբաղ աչքերդ՝ հնար չէ մաքից հանելի,
 Աղջեկ Աստուած կու սիրես՝ երբ գալիս ևս գեշտ անելի
 Իմայ տուր ողորմելոյն՝ զամ ձևմիիդ ծաղկունք ցանելի,
 Ուրախ ովասնոյ ասեմ՝ ջանս փայանդաղ անելով։
 Երեադ բաց ման արի՝ վառ ճրագն շալ չի ուզել,
 Բնածին վարդ թուշերդ՝ զարդարանքի խալ չի ուզել,
 Ծոցումոդ վայելողն, դրախտն անմանալ չի ուզել,
 Փոս սիրով ձաշակողն՝ ել այլ սէր զզալ չի ուզել,
 Ճար չունեմ ինձ խարում եմ՝ տեսածս երազ անելով։
 Եթէ որ փոքր խօսե՞ հարիւր տարեկան ծերի հետ,
 Կու շնիս կրկնածանօթ՝ իւր ջահիլութեան սէրի հետ,
 Ու դժոխք չի ցանկանայ՝ մին քեզ նման ընկերի հետ,
 Չի անմիլ արքայութիւն՝ սէր քարոզող սրբերի հետ,
 Փրկութիւն չի ստանալ՝ աղքատաց նիւազ անելով։
 Զարիեարին կանչեր մօտրդ՝ որ միշտ քեզի հարկաւոր է,
 Իւր բարեկամ Մայիֆին՝ քեզ ընծայ ել ուխտաւոր է:
 Դարդիմանդ քաղցր բախում՝ սէր քաշելում բախտաւոր է,
 Վա փաղուց հասկացել է որ աշխարհն անցաւ որ է,
 Սէրութեան զուռն է բացում՝ վարքդ մուխտմազ անելով։

Աշխատամ Մարտիրոսիս:

Երդ հինգեր բրուրդ տարեգարձի Աղդամ ին
 Վահման ազրութեան.

Եկաւ ժամանակ բարեկամ բաղդին,
 Երդ զարուն բերաւ Հայստան երկրին,
 Եղաւ յԱբարաս՝ հասաւ ՚ի Տիգրիս,

Դարձաւ դաղրեցաւ կեցաւ ՚ի Մասիս։
 Եւ ձայն տուաւ անկէ Հայոց,
 Զայն մի Յորդոմայ որդւոց,
 Որ մերկանան զցուրա ձմռան վարագոյր։
 Ճա՛մ է արդ Հայեր,
 Ընկեր առ ընկեր,
 Տամբ Սիրոյ համբոյր։
 Համբոյր մեր ըլլայ վկայ միութեան,
 Սահմանադրութեան։
 Եւ շիթեափառ Հայրենեաց խորան,
 Բացաւ տիրագին զեւր քող ձգնութեան.
 Հասին հոն Մուսայք, և Յուսոյ հրեշտակք,
 Ախորժ երգեցին ինդութեան նուագ։
 Եւ սիրտ տուին անկէ Հայոց,
 Սիրտ մի Յորդոմայ որդւոց,
 Որ մերկանան հեռ նախանձու վարագոյր։
 Ճա՛մ է արդ Հայեր,
 Ընկեր առ ընկեր,
 Տամբ Սիրոյ համբոյր։
 Համբոյր մեր ըլլայ մեր ուխտ միութեան,
 Սահմանադրութեան։

Ելաւ Հայաստան նոր գարնան ՚ի տես,
 Դարձայ ՚ի շքեղ իւր փառաց հանդէս։
 Դարձիր բաղդակոծ քնարդ իմ հոգւոյն,
 Դարձէք աւուրք կենաց, զարձէք յայդ յուսոյն։
 Եւ լոյս տուէք անկէ Հայոց,
 Լոյս մի Յորդոմայ որդւոց։
 Որ մերկանան մութ զիշերին վարագոյր։
 Ճա՛մ է արդ Հայեր,
 Ընկեր առ ընկեր,
 Տամբ Սիրոյ համբոյր։

Համբոյր մեր ըլլայ ինիք միութեան:
Աահմանապրութեան:

Ո. Հ. Գեղեցին:

74

Կուէր առ Սոխակ Հայաստանի.
, Ծագեա՛ Հեղիկ' երդի եղանակով.

Երդի՛ր Սոխակ Հայաստանի
Քո քաղցրաձայն Երդ սիրալի:
Թռի՛ր, պատմի՛ր դու մեր Սոխա՛կ,
Հայոց ազգին այս յիշատակ:

Երդի՛ր նոցա այս մեր հանդէս, (*)
Որ տօնումենք մեք սիրապէս:

Ասա՛ խումբ խումբ Հայ զաւակներ,
Երգեն ահա՛ այս մաղթանքներ:

, Կեցցէ մեր այս Ընկերութիւն,
Որ տալիս է մեղ կրթութիւն:

Կեցցէն Սորա վեհ Անդամներ,
Ագնիւ գործքով շատ տարիներ:

Ո. Գեղեցին:

(*) Գ. Բուածէ 1873 ամի Խագուայ Հայոց Աարդասիրապէտան
Ընկերութեան իններրորդ տարեգարձի առթիւ և Երդված է նոյն
տօնի հանդիսում Հայոց ուսումնարանի ուսանողներից:

Օսման. Ա. Գ. .

74
Զարթի՛ր, մայր Հայաստան, ՚ի լոյս արփենի.
Նոր առաւօտ շողեաց քեղ շող ծիրանի:
Աւետարերն եկեալ շիղ ՚ի բերանի.
Զիմաստութեան ձօնէ քեղ սուրբ ձելթենի:

Աղ'ւ աղաւնի
Նոյեան Տապանի,

Զարթի՛ր և պսակիա՛ զօրդիս գեղանի:
Ծովահայեաց սիրուն կայ անդ հանդրուան,
Եւրոպէ գշխոյին վերջին դիտարան,
Արքային մեր Թագի դոհար պատուական,
Բիւզնողիոյ երկրորդի ժառանգորդ անուան:
Անդ և Ճեմարան
Ազգիս Սրամեան:

Դաստակերտ հոյակապ Վեհին Խալիպեան:
Նսխիջեան պայծառ քաղաք մեր ծնդնդեան,
ՈՎ համար բազմագանձ վաճառուց Հայկեան,
Յաւերժ գու պանձայի՛ր որդւովք բազմութեան,
Եքեղ քո տաճարօք, Խանթիւք գեղազան:

Ակը յիւսումնարան
Դիմեմք Խալիպեան.

Դառնամք նաւք ակաղճուն գանձու գիտութեան:

Գ. Հ. Այլուրեան:

75

Ա. Ա. Յիւսուս.
Զամանացու
Լուս, որոց գու միայն ես յոյս,

Զձայն մանկանցս, ոՎ Տէր Յիտուս

Էջ զերդ ՚ի սուրբ քո ՚ի սեղան,
Եւ ՚ի սրտից մեր բազմարան.

Քեզ ծարաւեալ ոգիք են մեր
Արբո՛ զմեզ յանոյշ քո սէր:

Լո՛ւր մեզ Յիսուս, լո՛ւր զմեր ձայն.
Դու զԱզգս օրհնեա՛ և զվարժարան:

Տե՛ս Տէր մոաց մեր զիսաւար,
Եւ ծագեա՛ զլոյս քո հոգեվառ,
Տե՛ս ՚ի մեր սիրտ ախտից զհոյլ,
Յառաքինի ՚ի ջանս եմք թոյլ
Տո՛ւր մեզ զնորհ քոյնն հոր,
Զի մի ՚ի կրից պատրիմք մոլոր.

Լո՛ւր մեզ Յիսուս, լո՛ւր զմեր ձայն
Դու զԱզգս օրհնեա՛ և զվարժարան:

76

Անձուկ հոգւոյ:

Զարթի՛ր սիրո՛ւն դու իմ մանկիկ,
Քանի ննջես հեծելով,
Զքնաղ դէմիել լոյս Արեգին
Ճաճանչել է խայտալով:

Շատ օրօրներ ես երդեցի
Տիսուր աշացս արցունքով,
Բաց քո պայծառ արտեանունք
Հըշտակի վեհ նայուածքով:

Ծնած օրից քո ճակատիդ
Դրոշմեցի ֆրկչին խաչ,
Որ դու լինիս միշտ անվեհեր.
Հոգւով ազատ սրտով քաջ:

Թէ վատ բաղրի թշուառութեանց
Գերել են քեզ տեսիներ,
Մե՛ր սարսափի՛ր գունատ դէմքով
Շուտ սթափի՛ր, եւ ՚ի վեր:

Կենաց վիճակ կը մթնանայ
Բայց լուսնալոյ կայ և յոյս
Զարթի՛ր, զարթի՛ր իմ լուսնեակ:
Զարթի՛ր և ինձ ձօնէ լոյս:

Օրօրներով շատ ննջեցիր
Ժա՛մ է արդէն զարթնելոյ:
Զարթի՛ր, զարթի՛ր արդ կը ձայնեն
Նշանք քաջայ ՚ի հողոյ:

Զգի՛ր հեռու քեզնից դու նինջ,
Դիւցազնի պէս կա՛ց յոտին,
Դրախտն նդեմ իւր գետերով,
Զարթի՛ր ձայնէ ջերմագին:

Շարունակ նինջ վա՛տ է մահից.
Կը սիրէ կեանք արթնութիւն . . .
Զարթի՛ր հապա իմ քա՛ջ հոգեակ,
Փանի՞ քնես զօրն ՚ի բուն:

Օրօրողներ թէւ անթիւ
Ունեն պատած քո բոլոր
Բայց մի ննջեր դու խոր բնով,
Թողլով խեղջիս միշտ մնոր:

Թէ մարգարէք գուշակեցին.
Երկարատև քեզ այդ նինջ
Կը յաջողի ժամանակին
Առնել այդ գիր բնաջնջ:

Թէ կախարդներ սր սկեցին
՚ի քեզ փոշի թմբութեան,

Դրախտասահ գետոց սուրբ ջուր
Կը սայ քեզ կեանք արթնութեան:
Ո՛վ դու անմահ երկնեց Արքայ,
Ի՞ր դշխցին տո՛ւր զարթնել,
Քո ԽՈՉ և Սէր ազատ զրկած
Յառաջ, յառաջ միշտ դիմել:
Յովշաննէն Առաշեռնաց:

77

Աղէն տանն է.

— Զարմանք բան է հէսց զիտենաս
Աղէք տանը չին նստում,
Խակի չ'ելաւ, վուր մի զրթնիմ,
Աղպօյին իր տրնում:—
«Մէ արմընա, պարոն Սարգիս,
Էս աշխարքի ադաթին,
Գանա, իշխանք, դուն խարար չիս,
Վուր քասիրին կու ատին,

Առ օրինակ թէ մեծավուր
Ապահէտները ուսին
Գայ զըրան մօտ, հարցնէ աղին՝
«Տանն է».— տանն է, կօսին.—

Երսա էտնից մի փէշաքար
Էլի էն նօքրին հարցնէ:
«Տանն է աղէն» կընծին տալով
Խեղճին խկոյն դուրս կօնէ:

Թէ սալօպօվ ախջիկ-պարոն
Կու գայ՝ թո՛ղ ներս հրամսի՛,

Թէ զախիպով պառաւ ձալօն
Հարցնէ, կօսին՝ «տանը չէ»:
Թէ աղի մօտ լաւ շուրերով
Կու գաս, տանը կու զըթնիս.
Վայ թէ չուխէդ հընացած է,
Լաւն էն է տուն չի մտնիս,
Թէ վուր քըսէն ձեւիդ բրոնած՝
Պարօնին փուղ բերիլ իս,
Փառք ու պատով տուն մըտնում իս,
Պլիսի վերայ տիղ ունիս.
Թէ դուքանդար իս հիսաբով
Փուղի էտնից իս էկի;
«Տանն է աղէն» կօսին հալա
Ժամիցը տուն չի եկի:
Էս է հիմիկուայ ադաթը,
Կ'ուզիս ջըզրից տըռաքի,
Թէ քասիր իս՝ ջուրը նընկի,
Թէ խօջա իս՝ տուն մըտի:

Ու. Պատկանեան:

78

Արք այ ական երգ.

Չուարձացեալ ցնծա աշխարհս ամենայն,
Յաւուր հանդիսի վեհիդ գալստեան,
Բերան մանկոցն մաղթէ բարձրաձայն,
Զքեզ, Տէր Արքայ, յերգս առեալ զայս բան,
Կեցցէ ինքնակալ բարերար Արքայն
Յաղթող թշնամեայ կեցէ անսասան:
Աստուած զօրութեանց, բարձրեալ բարերար,
Տէր երկնից Արքայ, Տէր կենդանարար,

Արքայիս յաղթող միշտ խնամատար
Տուր օրեր զռարժ ընդ միոյն հազար
Կեցցէ Խքնակալ բարերար Արքայն
Յաղթող թշնամեաց կեցցէ անսասան:

79

ա յ գ ի ն ո ւ ո ր ի ե ր գ.

Զինուոր էի Հայոց ազգին մըտերիմ,
Երբ Հայաստան քարքանտ արեց թշնամին.
Պինտ պինտ յաւեց սիրար արի Հայերուն,
Այն օր նոքա թափել տուին գետ արիւն,
Շատ շատ քաջեր ընկան աստից ու անդից,
Ես էլ ընկայ թշնամիի տուր նետից,
Իմ մարմինը դաշտի միջին է ընկած,
Քրիստոնէի սուրբ օրէնքով չէ թաղած,
Դուն մի մնար աչքդ արցունք օրն ՚ի բուն
Սիրականիդ, իմ սիրական, մըտիր քուն.
Առառուն կու գայ չարագուշակ գումկանը,
Սուդ, ողբ, կըսկիծ նա կը նիւթէ իմ տանը.
Երբ որ լըսես վաղաժամիկ իմ մահը,
Առ երկու թի ու երկաթէ սուր բահը.
Առ քու հետը մի ըսպիտակ մեծ պատան,
Փորէ խորին ինձի համար գերեզման.
Գերեզմանիս վըսայ բըսնի վարդեսին,
Վարդը բացուի, աչքը զրաւէ ամենին,
Սոխակին էլ թող զրաւէ նա հոգին:
Քաղցր տաղեր թող ներշնչէ սոխակին.
Թող սոխակը անցըլս պատմէ ամենուն,
Թող լըսողը ողորմի տայ իմ հոգուն,

Գառհառ-Քառիպայ:

80

Է՞ր հեռանաս քո մայրենի աշխարհից,
Կարօս թողուս սերա բարեկամք քեզանից,
Մեր ամենիս դու մայր էիր զթառատ,
Արդ հեռանաս, մեղ մութ պատէ անփարատ:

Քո սուրբ ձեռօք մեր վերքերը շատ անդամ,
Լուանայիր, գեղ գնէիր ամեն ժամ,
Քո մաղերից ողորէիր վերակապ,
Քո բոլոր կեանքն աղղիդ համար էր ազապ:

Արդ Հայոց զօրքն իւրեանց մօրից որբանայ,
Վրայ ազգը քո խնամօք պերճանայ,
Հայաստանը զըկի իւր սուրբ նուշանից,
Վրաստանը բուրէ հոտով քաղցրալից:

Ուր որ երթաս, ուր որ լինիս տիրուհի,
Մեր սիրտ հողին քէղ հետ տանիս մաքրուհի,
Գնաս բարեաւ մեր լըս հաւատ քեղ ընկեր,
Աջն ու խաչը քեղ պահապան զօր դիշեր:

Ազդդ ու հաւատդ պինդ պահապանէ մեջ Վրաց,
Հայ անունդ միտք պահէ անմոռաց,
Լոյս հաւատիդ հաստատ կոցիր յաւխտեան
Լոյս հաւատդ քեղ միշտ պահէ անսասան:

81

Երդ ն ւ ս ա ն ո ղ ա ց.

Թումնիք գէպի լոյս, գիտութիւն,
Ազատութեան մենք զրօշակով,
Թումնիք այո, գէպ' մարդկութիւն,

7

Աէր, միութեան քնքոյշ սրտով:
 Տրայ-рай լի-լամъ, мои друзья!
Աէր, միութիւնն է մեղ ընծայ:
 Սիրենք, ընկե՛րք, Կրօն, Ազգութիւն,
Որ նմանինք «ՈՍԿԻ» դարուն.
 Պատճառ, տուեց աղասութիւն
Մեղ վեհ կայսրն և ամենուն
 Տրայ-рай լի-լամъ, мои друзья!
 Գիտութիւնն է մեղ միշտ ընծայ:
Կեցցեն Հայոց վարժարաններ,
Որք տալիս են մեղ կրթութիւն,
 Կեցցեն նոյս Հոգասարներ,
Եւ իմաստուն Պետագողներ:
 Տրայ-рай լի-լամъ, мои друзья!
 Հայոց Աշխարհն է մեղ ընծայ:
 Եւ Գրիգորի տան:

Թէ ծխաքարշը ձեռիս
Սենեակումը նստածեմ,
Քընթիցս ծուլս հանելիս
Կարծում եմ թէ իշխան եմ,
Երբ քամին ծուլս փրչե,
Ես պինդ ծիծաղում եմ,
Ասում եմ մեր գործերը
Եսպէս անցաւոր են:
Ազնի՛ւ խոտ՝ դու զօրութիւն,
Կեանք ու ուժ ես տալի,
Ալս կարնայի քեղ գովիլ,
Ինչքան սիրտը է տալի.

Ով երկինք տուր էս խոտին,
Դու արեւ, և անձրեւ շատ
Եւ սորա մշակողին
Օրհնութիւն, կեանք ու բաղդ:
Մենակութեան ժամանակ,
Դու ինձ լաւ ընկեր ես,
Թէ իմ սիրտը նեղանայ.
Փեղ կ'առնեմ ես ձեռը,
Թամնկ ես թուրքի ծխախոտ
Հարուսաններու բան ես,
Հողիս էլ տամ քեղ կառնեմ
Ու կածեմ գլրպանը:

Ինչքան էլ դատարկ լինի
Փողերիս քըսակը,
Պէտքէ անպակաս լինի
Բերնիս ծըսաքարշը:
Ուսանող՝ առ ծրիսքարշը.
Շուտ կանցնի քո կեանքը,
Ու ծրիմլով միաք արա՛
Ունայն է աշխարքը:

Թէ ֆլի գե քէ ֆ.

Թէ սիրում իս թամաշա,
Պիսիս տեհնի քաղքումը
Ինչին անում համաշա
Մարդիկ իրանց բաղչումը:
Հալի-հալէ, հալի-հալէ,
Էս ին անում քաղքումը,
Հալի-հալէ, հալի-հալէ,
Մարդիկ իրանց բաղչումը:
Միր պատուելի քաղքըուն
Աչքը ձականին է թըռել.
Դամաղին կըպել լեզուն —
Եւ չի ուզում նա լլուել:

Ծալսպատիկ ծառի տակ
Միր լոթիքն ին նստատել.
Տրկծուրնիրն ու խէլագէք
Իրանց բոլոր մօտ-արել:

Մին մինի կենաց ին խմում
Մեռելոց ու կենդանեաց,
Մին մինի բօղաղն ին խրում
Շամփուրներով խորոված,

Հաղար-փէշն լի զինով
Արկլացնում խըմում ին,
Տրկը բըռնած պինդ ձեռով,
Խոկի սախ թողնում ին:

Եստի՝ Կիօն ջուլօին
Քընաթաթախ զըռում է,
Ենտի՝ Վանօն ձալօին
«Երթի քաղին» մըռում է:

Էս ին անում համաշա
Մարդիկ իրանց բաղչումը.

Թաէ սիրում իս թամաշա
Պիտիս իլի քաղքումը:

84

